ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

1975 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-ԻՆ ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՐՁԱԿՎԱԾ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 28 հոկտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ Ա. Առաքելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1975 թվականի հունվարի 14-ին Նյու Յորքում ստորագրված՝ Տիեզերական տարածություն արձակված օբյեկտների գրանցման մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի սեպտեմբերի 24-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով կոնվենցիան և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Տիեզերական տարածություն արձակված օբյեկտների գրանցման մասին կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից՝ 1974 թվականի նոյեմբերի 12-ին և ստորագրման համար բացվել է Նյու Յորքում՝1975 թվականի հունվարի 14-ին: Կոնվենցիան ուժի մեջ է մտել 1976 թվականի սեպտեմբերի 15-ին:

2. Կոնվենցիայով նախատեսվում է, որ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը պարտադիր հիմունքներով ստեղծի և վարի տիեզերական տարածություն արձակված օբյեկտների կենտրոնական գրանցամատյան, տիեզերական տարածություն արձակված օբյեկտների պարտադիր գրանցման համակարգ, ինչպես նաև Կողմ հանդիսացող պետություններին պետք է տրամադրվի լրացուցիչ միջոցներ և ընթացակարգեր՝ տիեզերական օբյեկտները նույնականացնելու համար:

3. Ըստ Կոնվենցիայի II հոդվածի՝ տիեզերական օբյեկտը տիեզերք արձակող պետությունը պետք է այն գրանցի իր կողմից վարվող համապատասխան գրանցամատյանում: Յուրաքանչյուր տիեզերք արձակող պետություն ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին տեղեկացնում է այդ գրանցամատյանի ստեղծման մասին: Յուրաքանչյուր գրանցամատյանի բովանդակությունը և այն վարելու պայմանները սահմանվում են տվյալ գրանցման պետության կողմից (կետ 1-ին և 3-րդ):

Եթե տիեզերական օբյեկտն արձակել են երկու և ավելի տիեզերք արձակող պետություններ, ապա նրանք համատեղ են որոշում, թե իրենցից ով է գրանցելու օբյեկտը, սույն հոդվածի 1-ին պարբերության համաձայն, հաշվի առնելով «Տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի և այլ երկնային մարմինների հետազոտման ու օգտագործման ոլորտում պետությունների գործունեությունը կարգավորող սկզբունքների մասին» պայմանագրի VIII հոդվածի դրույթները և չխախտելով տիեզերք արձակող պետությունների միջև կնքված կամ կնքվելիք՝ այդ տիեզերական օբյեկտների և դրանց անձնակազմի նկատմամբ իրավազորության կամ վերահսկողության մասին համապատասխան համաձայնագրերը (կետ 2-րդ):

4. Կոնվենցիայի III հոդվածի համաձայն՝ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը վարում է գրանցամատյան, որի բոլոր տվյալները պետք է լինեն ամբողջությամբ

հասանելի, և որտեղ գրանցվում են IV հոդվածով նախատեսված՝ պետությունների կողմից տրամադրված հետևյալ տեղեկությունները. ա) տիեզերք արձակող պետության անվանումը, բ) տիեզերական օբյեկտի՝ համապատասխան բնութագրող նշանը կամ դրա գրանցման համարը, գ) տիեզերք արձակելու ամսաթիվը և տարածքը կամ վայրը, դ) ուղեծրի հիմնական պարամետրերը՝ պտույտների պարբերությունը, թեքումը, հեռակետն ու մերձակետը, ե) տիեզերական օբյեկտի ընդհանուր գործառույթը:

5. Կոնվենցիայի V հոդվածով նախատեսվում է, որ տիեզերական օբյեկտի՝ համապատասխան բնութագրող նշանով կամ դրա գրանցման համարով (կամ էլ՝ երկուսը միասին) առանձնացված լինելու պարագայում գրանցման պետությունը ծանուցում է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին այդ մասին, որն էլ այդ ծանուցման մասին գրանցում է կատարում գրանցամատյանում:

6. Ըստ Կոնվենցիայի VI հոդվածի՝ եթե Կոնվենցիայի դրույթների կիրառումը Կողմ հանդիսացող որևէ պետություն հնարավորություն չի տվել նույնականացնելու այն տիեզերական օբյեկտը, որն իրեն կամ իր որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի վնաս է պատճառել, կամ որն ունի վտանգավոր կամ վնասակար բնույթ, ապա Կողմ հանդիսացող մյուս պետությունները պետք է իրագործելիության սահմաններում արձագանքեն այդ պետության կամ այդ պետության անունից Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարի միջոցով ներկայացված՝ օբյեկտը նույնականացնելու համար արդարացի և ողջամիտ պայմաններով աջակցության խնդրանքին:

7. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- որպես տիեզերք արձակող պետություն հանդես գալու պարագայում ստեղծել և վարել գրանցամատյան՝ գրանցամատյանի ստեղծման մասին տեղեկացնելով Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին, իսկ տիեզերական օբյեկտը Երկրի ուղեծիր կամ դրա սահմաններից դուրս արձակելիս գրանցել տիեզերական օբյեկտը՝ մուտքագրում կատարելով համապատասխան գրանցամատյանում (հոդված 2, կետ 1),

- որպես գրանցման պետություն՝ կիրառելիության սահմաններում Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին տրամադրել ՀՀ գրանցամատյանում գրանցված յուրաքանչյուր տիեզերական օբյեկտի մասին Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին կետում նշված տեղեկությունները (հոդված 4, կետ 1),

- որպես գրանցման պետություն՝ իրագործելիության և կիրառելիության սահմաններում Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին ծանուցել փիեզերական այն օբյեկտների մասին, որոնց վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը նախկինում տեղեկություն է տրամադրել, և որոնք եղել են Երկրի ուղեծրում, բայց այլևս այնտեղ չեն (հոդված 4, կետ 3),

- այն դեպքում, երբ Երկրի ուղեծիր կամ դրա սահմաններից դուրս արձակված փիեզերական օբյեկտն առանձնացված է բնութագրող նշանով կամ գրանցման համարով, որին հղում է կատարվում Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին կետի (բ) պարբերության մեջ, կամ էլ՝ երկուսը միասին, ապա որպես գրանցման պետություն՝ ծանուցել գլխավոր քարտուղարին այդ փաստի մասին՝ 4-րդ հոդվածի համաձայն փիեզերական օբյեկտների վերաբերյալ տեղեկությունները ներկայացնելու ժամանակ (հոդված 5),

- եթե Կոնվենցիայի դրույթների կիրառումը հնարավորություն չի տվել Կոնվենցիայի Կողմ հանդիսացող որևէ պետության նույնականացնելու այն փիեզերական օբյեկտը, որն իրեն կամ իր որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի վնաս է պատճառել, կամ որն ունի վտանգավոր կամ վնասակար բնույթ, ապա, մասնավորապես, փիեզերքի դիտանցման և հետազծման հնարավորություններ ունենալու պարագայում, իրագործելիության սահմաններում արձագանքել Կողմ այդ պետության կամ այդ պետության անունից գլխավոր քարտուղարի միջոցով ներկայացված՝ օբյեկտը նույնականացնելու համար արդարացի և ողջամիտ պայմաններով աջակցության խնդրանքին, իսկ որպես նման խնդրանք ներկայացնող Կողմ հանդես գալու պարագայում իրագործելիության սահմաններում տեղեկություններ ներկայացնել խնդրանքով դիմելու համար հիմք հանդիսացող դեպքերի ժամանակի, բնույթի և հանգամանքների մասին (հոդված 6),

- Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին համապատասխան՝ փիեզերական գործունեություն իրականացնող միջազգային միջկառավարական կազմակերպության անդամ հանդիսանալու պարագայում ձեռնարկել անհրաժեշտ քայլեր այդ կազմակերպության հայտարարություն կատարելն ապահովելու համար (հոդված 7, կետ 2):

8. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածով նախատեսված պահանջներին, կոչված են ապահովելու արբանյակային կապի ներդրման և զարգացման նպատակով համապատասխան միջոցառումների իրականացմանը,

ստեղծելու փոխշահավետ հարաբերություններ Կոնվենցիայի Կողմ պետությունների հետ տիեզերական տարածության հետազոտմանը և խաղաղ օգտագործմանը նպաստելու հարցում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 1975 թվականի հունվարի 14-ին Նյու Յորքում ստորագրված՝ Տիեզերական տարածություն արձակված օբյեկտների գրանցման մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

28 հոկտեմբերի 2014 թվականի
ՍԴՈ-1173